

Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն



Հրահանգ №1-24 առաջադրանքների համար: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք X նշանը, ապա նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 1. Պատմության ո՞ր ճյուղն է ուսումնասիրում նկարում պատկերված արտեֆակտերը:



- ა. բռնիատիկան,
- ბ. նումիզմատիկան,
- გ. ֆալերիատիկան,
- დ. գլխատիկան:

(1) 2. Ո՞ր մշակույթին է պատկանում նկարում պատկերված ոսկե գավաթը:



ա. Քուռ-Արաքսի,

ბ. Թրիալեթի,

գ. Կոլխական,

դ. Կոբանյան:

(1) 3. Ո՞ր թագավորի հրամանով է ստեղծվել նկարում ներկայացված Բեհիսթունի հայտնի արձանագրությունը:



- ա. Աշուրբանիպալի,
- բ. Թիզլաթպալասար I-ի,
- գ. Դարեհ I-ի,
- դ. Համնուրաբի:

(1) 4. Թվարկածներից ո՞ր դատողությունն է սխալ:

ա. Արիստոտելն Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչն էր:

ծ. Արիստոտելն Աթենքում հիմնադրել է իր սեփական դպրոցը՝ «Լիցեյը»:

գ. Արիստոտելը մասնակցում էր Ալեքսանդրիայի գրադարանի հիմնադրմանը:

զ. Արիստոտելը կյանքի վերջին տարիներին ստիպված էր հեռանալ Աթենքից:

(1) 5. Ի թիվս այլ պատճառների, ինչո՞վ էր պայմանավորված Պելոպոնեսյան պատերազմի արդյունքը:

- Տ. Աթենքի պարտությամբ Քերոնեի ճակատամարտում,
- Ծ. Կորնթոսյան ծովային միության կազմալուծմամբ,
- Ծ. Պարսիկների հետ սպարտացիների դաշինքով,
- Թ. Սիցիլիայում ռազմական արշավախմբի խափանմամբ:

(1) **6. Հոմի պատմության n^o ժամանակաշրջանն է կոչվում Պրինցիպատ:**

ա. Նախապատմական ժամանակաշրջանը, երբ կառավարում էր առասպելական Հոմուլոսը և սկսվեց քաղաք Հոմի հզորացումը:

բ. Թագավորների կառավարման վերջին ժամանակաշրջանը, որն ավարտվեց Տարքվինիոս Գոռոզի թագավորությամբ:

գ. Հանրապետության թուլացման ժամանակաշրջանը, որն ավարտվեց Հուլիոս Կեսարի միանձնյա կառավարման հաստատմամբ:

դ. Վաղ կայսրության ժամանակաշրջանը, որը սկսվում է Օկտավիանոս Օգոստոսի կառավարմամբ:

(1) 7. Ի թիվս այլ փաստերի, ի՞նչն է վկայում Քարթլիի թագավորության հզորացման փաստը I դարի 30-ական թվականներին:

Տ. Ալբանիայում գահ բարձրացավ վրաց իշխանը,

Ծ. Լազիկայի թագավորությունը դարձավ Քարթլիի թագավորի վասալը,

Ճ. Ալանները տուրք վճարելով ճանաչեցին Քարթլիի թագավորի վասալությունը,

Ծ. Հայաստանի գահը գրավեց Քարթլիի արքայական ընտանիքի ներկայացուցիչը:

(1) **8. XI դարում տեղի ունեցած Մեծ Սքիզմայի մասին ո՞ր դատողությունն է ճիշտ :**

ճ. Հռոմի պապի և Կոստանդնուպոլսի պատրիարքի միջև առճակատման պատճառ էին դարձել ոչ միայն կրոնական, այլ նաև քաղաքական հարցերը:

Ճ. Սրբազան Հռոմեական կայսրության կայսրի և Բյուզանդիայի կայսրի միջև քաղաքական հակամարտությունն աստիճանաբար վերաճեց սուր կրոնական առճակատման:

Ը. Աթոս/Աֆոն լեռան վանականների և Ֆրանցիսկյան միաբանության դոգմատիկ հակամարտությունը սկսվեց վիճաբանությամբ և վերաճեց քաղաքական առճակատման:

Թ. Հռոմեական կայսրության արևելյան և արևմտյան հատվածների միջև քաղաքական-տնտեսական տարբերությունները հանգեցրեցին կրոնական բախումների:

(1) 9. Ո՞ր նեղուցի անունն է կապված արարական նվաճումների հետ:

ճ. Մեսինյան,

ծ. Բոսֆորի,

գ. Ջիբրալթարի,

զ. Դարդանեվի:

(1) 10. Թվարկածներից ո՞ր դատողությունն է սխալ Վրաստանի թագավոր Գիորգի II-ի թագավորության մասին:

ա. Թագավորը Փարցխիսիի մոտ ջախջախեց սելջուկներին,

ბ. որոշ ժամանակով գրավեց Կարս բերդաքաղաքը,

գ. միավորեց Կախեթ-Հերեթին,

դ. զինադադար կնքեց սելջուկյան սուլթանի հետ:

(1) 11. Խորեզմյանների ո՞ր գործողությունն օգտագործեց որպես պատրվակ Չինգիզ խանը՝ իրենց պետության վրա հարձակվելու համար:

Տ. Իր հպատակության տակ գտնվող վաճառականների մեծ խմբի սպանությունը,

Ծ. սահմանամերձ քաղաքների վրա հարձակումն և թալանը,

Ը. տարեկան տուրքի վճարման դադարեցումը,

Թ. բանակցությունը մրցակից մոնղոլ առաջնորդների հետ:

(1) 12. Ո՞ր պատմական իրադարձությունն է պատկերված ներկայացված նկարում:



- ա. Բարդուղիմեոսյան գիշերը,
- բ. Կոստանդնուպոլսի անկումը,
- գ. Փաննա դ'Արկի մուտքը Օռլեան,
- դ. Երուսաղեմի գրավումը խաչակիրների կողմից:

(1) **13. Ինչո՞վ էր առանձնանում VII խաչակրաց արշավանքը խաչակրաց մյուս արշավանքներից:**

ճ. Միայն այս արշավանքի ընթացքում է օգտագործվել Պորտուգալիայի թագավորի նավատորմը,

Ն. արշավանքին առաջին և վերջին անգամ մասնակցեց Գերմանիայի կայսրը:

Շ. Ճակատամարտում զոհվեց Լեոնի և Կաստիլիայի թագավորը,

Ը. գերի ընկավ արշավանքի հրամանատար Ֆրանսիայի թագավորը:

(1) 14. Ի՞նչն է կապված Անգլիայի թագավոր Հենրի VIII-ի անվան հետ:

- Տ. Հաղթանակն իսպանացիների նկատմամբ և «Անպարտելի արմադայի» կործանումը,
- Ծ. «Ազատության մեծ խարտիայի» ընդունումը և առաջին խորհրդարանի գումարումը,
- Ճ. առաջին անգլիական արշավախմբի ուղարկումն Ամերիկայի մայրցամաք,
- Թ. Հռոմի պապի հետ հարաբերությունների խզումն ու Անգլիական եկեղեցու գլխավորումը:

(1) 15. Ի թիվս այլ պատճառների, ո՞ր իրադարձությունն էր պայմանավորել Լենկ Թեմուրի առաջին արշավանքը Վրաստան:

Տ. Հարավային Կովկասով դեպի հյուսիսային Իրան Թոխթամիշի արշավանքը,

Ծ. Սուլթան Բայազիդ I-ի կողմից Բաղդադի գրավումը Վրաստանի թագավորական արքունիքի հետ համաձայնեցված,

Ճ. վրացական բանակի կողմից հարևան մուսուլմանական պետությունների նվաճումը,

Ծ. Վրաստանի թագավորի մերժումը՝ Խորեզմի իշխանին Լենկ Թեմուրին հանձնելու հետ կապված:

(1) 16. Ո՞ր պետությունը դադարեց գոյություն ունենալ Տենչտիտլանի անկման հետևանքով 1521 թվականին:

ա. Ապաչիների,

ծ. Ինկերի,

գ. Ացտեկների,

դ. Մայաների:

(1) 17. Ո՞րն էր Օլիվեր Կրոմվելի օրոք Անգլիայի և Նիդեռլանդների միջև պատերազմի պատճառը:

Տ. Հակասությունները կաթոլիկների և բողոքականների միջև,

Ծ. օգտակար հանաձոներով հարուստ Ֆլանդրիան նվաճելու փորձը,

Ձ. աշխարհի ծովերի նկատմամբ առավելություն ձեռք բերելու ցանկությունը,

Թ. միապետական և հանրապետական կառավարման ձևերի անհամատեղելիությունը:

(1) 18. Ներկայացված հուշարձանի վերաբերյալ ո՞ր դատողությունն է ճիշտ:



ա. Հրեշտակապետաց տաճարը կառուցվել է Կախեթիի թագավոր Լևանի կողմից, որտեղ և հանգչում է ինքը թագավորը:

ծ. Սուրբ Գիորգիի եկեղեցին և թագավորական պալատը կառուցվել է Կախեթիի թագավոր Ալեքսանդր I-ի հրամանով:

ց. Աստվածածնի վանքը վերակառուցել են Էրեկլե II-ը և Դարեջան թագուհին և վանքին կից կառուցել մատուռ:

զ. Սուրբ Նիկողոզի անվան եկեղեցին կառուցվել և պատկերազարդվել է Կախեթիի թագավոր Կվիրիկե Մեծի կողմից:

(1) **19. Սույն I-ի n^o ր նախաձեռնությունն է ավարտվել ձախողմամբ:**

- Տ. Օսմանյան կայազորների արտաքսումը Իմերեթից,
- Ծ. արշավանքը Քոբուլեթի ուղղությամբ,
- Ճ. Ռաճայի ուխտադրուժ Էրիսթավի հնազանդեցումը,
- Ծ. Աբխազիայի կաթողիկոսարանի բարեփոխումները:

(1) 20. Հարավային Կովկասում տեղի ունեցած ո՞ր իրադարձությունն է նպաստել Ռուսաստանի բանակին ճնշել Ալեքսանդր Բատոնիշվիլիի հրամանատարությամբ Կախեթիի ապստամբությունը:

ս. Սուլէյման փաշայի պարտությունը և ռուսների կողմից Ախալցխիսեի գրավումը,

ծ. Աբբաս-Միրզայի պարտությունը ռուսների դեմ Ճակատամարտում,

ց. ռուսական զորքի կողմից Շամիլի դիմակայությունը կոտրելը,

զ. Սուլոմոն II-ի ապստամբության պարտությունը և թագավորի արտաքսումը:

(1) **21. Ո՞րն է ճիշտ դատողությունը Վրաստանը ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկելու մասին:**

- ա. ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկվելու երկրորդ տարում Վրացական ԽՍՀ-ն միավորեցին Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության մեջ,
- բ. Վրաստան ԽՍՀՄ-ը նախ միավորվեց Կովկասի Համադաշնությունում, ապա միացավ նորաստեղծ ԽՍՀՄ-ին,
- գ. Վրացական ԽՍՀ-ն ընդգրկվեց Անդրկովկասյան ԽՍՀ-ի կազմում, որն իր հերթին ԽՍՀՄ-ի հիմնադիրներից մեկն էր,
- դ. ԽՍՀՄ կողմից Վրաստանի Հանրապետությունը օկուպացնելուց հետո այն բռնի կերպով ընդգրկեցին այդ միավորման կազմի մեջ:

(1) **22. Ի՞նչ ձեռնարկեց Մուսլիմին Սյունիսենի խորհրդածողովից հետո:**

Տ. Նվաճեց Եգիպտոսը,

Ծ. գորքով ներխուժեց Ալբանիա,

Ձ. ճանաչեց Վատիկանի անկախությունը,

Թ. դադարեց միջամտել Իսպանիայի քաղաքացիական պատերազմին:

(1) **23. Ի՞նչը իրթան հանդիսացավ 1956 թվականին, այսպես կոչված, Սուեզի ճգնաժամի ստեղծման համար:**

ա. Եգիպտոսի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացումը,

բ. ՄԱԿ-ի կողմից ռազմական նավերի համար Սուեզի ջրանցքի փակումը,

գ. ջրանցքից օգտվելու արտոնությունն ձեռք բերելու ԱՄՆ-ի փորձը,

դ. Սուեզի ջրանցքն ամբողջությամբ վերահսկելու ԽՍՀՄ-ի ցանկությունը:

(1) **24. Ո՞րն էր 1979 թվականին Աֆղանստանում պատերազմ սկսելու հիմնական պատճառներից մեկը:**

ճ. «Թալիբան» շարժման իշխանություն գալը,

ՆԱՏՕ-ի զորքերի մուտքը Աֆղանստան,

ՆԱՏՕ-ի զորքերի մուտքը Աֆղանստան,

Գ. Աֆղանստանում լիարժեք վերահսկողություն ունենալու ԽՍՀՄ-ի ցանկությունը:

Հրահանգ №25-28 առաջադրանքների համար

Ժամանակագրական առումով դասավորեք պատմական իրադարձությունները: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն անվանաձև իրադարձության համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, հետևաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 25. Ժամանակագրական առումով դասավորեք Հին Արևելքի պետությունները, ըստ դրանց կործանման ժամանակի:

1. Ասորեստան,
2. Մարաստան,
3. Ուրարտու:

(1) 26. Ժամանակագրական առումով դասավորեք XIV դարում Տրանսիայում զարգացող իրադարձությունները.

1. Ժակերիա,
2. «Հարյուրամյա պատերազմի» սկիզբ,
3. Վալուաների դինաստիայի գահակալում:

(1) 27. Ժամանակագրական առումով դասավորեք Իտալիայի միավորման հետ կապված իրադարձությունները.

1. Վիկտոր Էմանուիլ II-ին Իտալիայի թագավոր հռչակելը,
2. Վենետիկի մարզի ընդգրկումը Իտալիայի կազմում,
3. Սուլֆերինոյի ճակատամարտը:

(1) 28. Ժամանակագրական առումով դասավորեք XIX դարի Վրաստանում զարգացող իրադարձությունները.


1. Ճորտատիրության վերացումն Արևելյան Վրաստանում,
2. Գուրիայի ապստամբությունը,
3. «Երրորդ Դասի» («Երրորդ խմբավորում») սապարեզ դուրս գալը:

Հրահանգ №29 առաջադրանքի ամար:

Աշակերտին տրվեց քարտեզ: Սեփական գիտելիքի և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ տրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից երկուսը (2) սխալ են պարունակում: Դուք պետք է գտնեք սխալներն, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 2:

Առաջադրանք 29: Քարտեզն ու հարցերը տես հաջորդ էջերում





ხარცერქ თსუ` ხაჯორქ ლჷონ

Աշակերտին ուղղած հարցերը.

29.1. Ո՞ր պետության տարածքում էին ընթանում պատերազմական գործողությունները ներկայացված քարտեզում:

29.2. Քարտեզի համաձայն, ո՞ր թվականներին էին ընթանում նշված պատերազմական գործողությունները:

29.3. Քարտեզի համաձայն, ո՞ր պետությունն է իրականացրել ռազմական ագրեսիա:

29.4. Քարտեզի համաձայն, ո՞ր պետությունն է պարտություն կրել այս պատերազմում:

29.5. Քարտեզի համաձայն, ինչո՞ւմ էր կայանում նշված պարտությունը:

29.6. Ո՞ր միջպետական պայմանագիրը ճանապարհի բացեց նշված ռազմական ագրեսիայի համար:

Աշակերտի տված պատասխանները.

29.1. Ֆինլանդիայի

29.2. 1939-1940

29.3. Ռուսաստանի Դաշնությունը

29.4. Ֆինլանդիան

29.5. Տեղի ունեցավ Ֆինլանդիայի ամբողջական օկուպացում

29.6. Մոլոտով-Ռիբենտրոպ պակտը

Հրահանգ № 30 առաջադրանքի համար: Ուշադիր վերլուծե՛ք նկարում տրված տեղեկատվությունը և պատասխանե՛ք տրված հարցերին: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Նկարներն ու հարցերը տես հաջորդ էջերում



Առաջադրանք 30.



հարցերը տես՝ հաջորդ էջում

Բոլոր երեք նկարները վերաբերում են պատմական մեկ իրադարձությանը, որը պայմանականորեն կարող ենք բաժանել երեք փուլի՝ առաջին (սկզբնական), երկրորդ (միջին), երրորդ (վերջին):

Հարցեր.

(2) **30.1.** Նկարներում ներկայացված պատմական իրադարձության n° փուլն է պատկերված N1 նկարում:

Ձեր պատասխանը հիմնավորե՛ք ըստ նկարի:

(2) **30.2.** Ո՞ր պետությունների ներկայացուցիչներն են պատկերված 1939 թվականին արված N2 լուսանկարում և n° ռազմական արշավից հետո:

(2) **30.3.** N3 նկարը վկայում է պատերազմի որոշակի փուլում պատերազմող պետություններից մեկի հաջողությունը: Նշե՛ք այդ պետությունը և այդ պետության նվաճած հաջողությունը հիմնավորեք ըստ նկարի:

(1) **30.4.** Նշե՛ք մեկ կոնկրետ դասի թեմայի վերնագիր, որի ընթացքում կօգտագործեիք բոլոր երեք նկարները:

Հրահանգ № 31 առաջադրանքի համար:

Ուշադիր ընթերցե՛ք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 18:

Առաջադրանք 31 Պատմական փաստաթուղթն ու հարցերը տես հաջորդ էջերում



Ռուսական բանակը 1913 թվականին: Քաղվածքներ Գերմանիայի Գլխավոր շտաբի զեկույցից

Մանջուրիայում պատերազմից հետո Ռուսաստանի ռազմական գործերում զգալի վերելք է նկատվում: Պետության տնտեսական առաջընթացից ելնելով հնարավոր դարձավ բանակին տրամադրել միջոցներ, որոնք զգալիորեն գերազանցում էին պաշտպանության համար նախատեսված մյուս պետությունների ծախսերը: Ուստի հնարավոր էր ոչ միայն վերացնել պատերազմի հետևանքով ծագած նյութատեխնիկական խնդիրները, այլև վերազինել և մատակարարել բանակը՝ ժամանակակից ռազմատեխնիկական միջոցներով՝ դրանով իսկ հավասարեցնելով այն Արևմտատեվրոպական խոշոր պետությունների բանակների մակարդակին: Բարձրացնելով աշխատավարձերն ու կենսաթոշակները հնարավոր դարձավ երիտասարդացնել և ավելացնել սպայական զորամարմնի կազմի քանակը: Գերմանական

կազմակերպչական սկզբունքների ներդրումը հնարավորություն տվեց ստեղծել գրեթե գոյություն չունեցող ենթասպայական զորամարմին: Ռուսաստանի Գլխավոր շտաբի կողմից պատերազմից անմիջապես հետո ստեղծված ծրագրի հիման վրա իրականացվեց բանակի արմատական վերակազմավորում: Հիմնովին փոխվեցին բոլոր կանոնադրությունները՝ հաշվի առնելով Ֆրանսիայի և հատկապես Գերմանիայի փորձը, որը հարմարեցված էր Ռուսաստանի յուրահատուկ պայմաններին:

Ռուսաստանում ռազմական գործերի այս վերելքը սահմանափակվում էր ռուս ժողովրդի թերություններով, որոնք հնարավոր չէր վերացնել ոչ փողի, ոչ էլ կազմակերպչական աշխատանքների միջոցով: Այդ թերությունները կայանում են ցանկացած մեթոդական աշխատանքով զբաղվելու ցանկության բացակայության, պարտականության անբավարար զգացումի, պատասխանատվության վախի,

Անցնել հարցերին՝ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#)

Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

նախաձեռնության բացակայության և ժամանակը ճիշտ որոշելու և օգտագործելու լիակատար անկարողության մեջ: Պետք է խոստովանենք, որ այդ թերությունների հետ մեկտեղ ռուս ժողովուրդն ունի նաև լավ ռազմական հատկություններ, որոնք հիմնականում բացատրվում են նրանով, որ ռուս ժողովուրդն ինը տասներորդով շինական ժողովուրդ է:

Ռուս զինվորը ուժեղ է, անհավակնոտ և համարձակ, սակայն ճարպիկ չէ, ինքնուրույն չէ և զուրկ է ճկուն մտքից: Նա հեշտությամբ կորցնում է լավ հատկություններն իր ղեկավարի մոտ, որին անձամբ չի ճանաչում և այն ստորաբաժանումներում, որոնց ինքը սովոր չէ:

Հեղափոխական նկրտումները վերջին տարիներին զգալի հաջողություններ ունեցան բանակում, հատկապես տեխնիկական ստորաբաժանումներում: Սակայն, ընդհանուր առմամբ, ռուս զինվորը դեռ հավատարիմ է թագավորին և հուսալի:

Անցնել հարցերին՝ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#)

Գերմանիայի և Ավստրիայի միջև պատերազմը հանրամատչելի կլինի Ռուսաստանի բնակչության շրջանում, մինչդեռ Ռուսաստանում բնակվող լեհերին իշխանության համար ոչ այնքան հուսալի պետք է համարենք: Սպաներին բնորոշ է անձնական խիզախությունը, սակայն նրանց մոտ բացակայում է պարտականության և պատասխանատվության զգացումը: Ելնելով դրանից, աշխատանքային անկարգություններից խուսափելու նպատակով ղեկավարության կողմից ամենուր և ամեն ինչում անհրաժեշտ է իրականացնել վերահսկողություն:

Ռուս սպաների առավելությունը սառնասրտությունն ու ուժեղ նյարդերն են, որոնք չեն դավաճանում նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում: Սակայն ռուս սպան շատ է սիրում անձնական հարմարավետությունը, ծանրաշարժ է ֆիզիկապես և հոգեպես, ինքնուրույն չէ և անզոր անսպասելի իրադարձությունների դեպքում: Ռուս սպան պատրաստ է գնալ առանձնահատուկ

Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

դժվարությունների և վտանգների հետ կապված ձեռնարկումների, եթե ենթադրում է, որ այդ մասին կիմանան բոլորը: Եթե այդ ազդակը բացակայում է, ապա, նույնիսկ ամենապատասխանատու իրավիճակում, նա կգտնի իր համար ամենահարմար ելքը: Գլխավոր շտաբի սպաները շատ են աշխատում գիտական ոլորտում: Ռուս սպաները, հատկապես Վիլնոյի և Վարշավայի ռազմական շրջաններում (օկրուգ), քաջատեղյակ են մեր բանակի հատկություններին և կազմակերպվածությանը, ինչպես նաև մեր սահմանամերձ գավառների աշխարհագրական և ամրաշինական պայմաններին:

Ռուսները մեծ առավելություն ունեն, քանի որ նրանց մոտ գերմաներենի իմացությունն ավելի տարածված է, քան ռուսերենը մեզ մոտ: Ռուս սպաներից շատերը, օրինակ՝ Մերձբալթյան երկրներից, սահուն՝ առանց առողջանության խոսում են գերմաներեն և այլ համազգեստով նրանց ազատ կարող են համարել

Անցնել հարցերին՝ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#)

գերմանացիներ: Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում մեր առաջավոր պահակակետերը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն այդ երևույթին:

Ռուսական բանակի տեղաշարժն այնպես, ինչպես նախկինում, տեղի է ունենում շատ դանդաղ: Քիչ թե շատ ռուսական մեծ ռազմական զորամասն ի վիճակի չէ արագորեն պաշտպանությունից անցնել հարձակման կամ արագորեն փոխել շարժման ուղղությունը:

Հետևաբար, բախվելով ռուսների հետ, գերմանական հրամանատարությունը կկարողանար համարձակորեն կատարել այնպիսի զորաշարժ որը չէր համարձակվի իրականացնել մեկ այլ հակառակորդի դեպքում:

Սահմանը հատելուց հետո ռազմական հրամանատարությունը ստիպված կլինի հաշվի նստել բոլորովին այլ պայմանների հետ, որոնք կապված են ռազմական գործողությունների թատրոնի բնույթի հետ:

Ճանապարհների վատ որակը պայմանավորված է

Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

ամրապինդ շինանյութերի բացակայությամբ և բնակավայրերի միջև մեծ հեռավորություններով:

Ամուր երեսպատում ունեն միայն մայրուղիները, թեև դրանք հաճախ այնքան վատ վիճակում են, որ ավտոմոբիլային և բեռնատար տրանսպորտը կարող է բախվել մեծ դժվարությունների: Մայրուղիները գրեթե ամենուրեք զուրկ են երեսպատումից: Նրանց պիտանիությունը կախված է եղանակից և բնահողից:

Ամռանը ճահճային տարածքները հաճախ անցանելի են: Ճահիճների միջով անցնում են արահետներ, որոնք անցանելի են տարվա ցանկացած եղանակին, սակայն այդ արահետները հայտնի են միայն տեղի բնակիչներին և նշված չեն քարտեզների վրա:

Անցնել հարցերին՝ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#)

Չանտառահատված ընդարձակ անտառները, որոնք հաճախ ունենում են ճահճացած հողեր, խոչընտոտ են հանդիսանում են գորքերի տեղաշարժի համար:

Նույնիսկ քաղաքներում քիչ են մեծ տները, իսկ գյուղերում դրանք հանդիպում են միայն կալվածքներում և ագարակներում: Սովորական գյուղացիական փայտե տնակը փոքր է և ցածր: Մեծ մասամբ ունի մեկ սենյակ, որտեղ հաճախ ապրում են անասունների հետ միասին:

Ճանապարհների և բնակավայրերի բնույթը պետք է հաշվի առնվի արշավային և հանգստյան պայմաններին վերաբերող կարգադրությունների դեպքում:

հարցերը տես հաջորդ էջերում

Տեքստը ներբեռնված է հետևյալ կայքէջից՝ <http://www.firstwar.info/articles/index.shtml?4>

Հարցեր:

(1) **31.1.** Համաձայն աղբյուրի, ինչո՞վ չէր զիջում ռուսական բանակը Եվրոպայի խոշոր պետությունների բանակներին:

(1) **31.2.** Ըստ ձեզ, ինչո՞ւ էին հեղափոխական գաղափարները հիմնականում տարածվում ռուսական բանակի տեխնիկական ստորաբաժանումներում:

(1) **31.3.** Ձեր կարծիքով, Գերմանիայի և Ավստրիայի պատերազմը ինչո՞ւ կլիներ հանրամատչելի Ռուսաստանի բնակչության շրջանում:

(1) **31.4.** Աղբյուրի ո՞ր տեղեկությունն է մատնանշում, որ Ռուսաստանի տնտեսությունում գյուղատնտեսությունը շարունակում էր առաջատար տեղ գրավել:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [4-ին էջին](#)

(1) **31.5.** Համաձայն աղբյուրի, ի՞նչն է թույլ տվել Ռուսաստանին բարելավել բանակի ֆինանսավորումը:

(1) **31.6.** Համաձայն աղբյուրի, ո՞ր պետությունների փորձն է հաշվի առնվել ռուսական բանակի վերակազմավորման գործում:

(2) **31.7.** Համաձայն փաստաթղթի, ամբողջությամբ թվարկե՛ք ռուս սպաների և զինվորների դրական հատկությունները:

(2) **31.8.** Բացատրե՛ք, թե աշխատավարձերի և կենսաթոշակների բարձրացումը ինչպե՞ս կարող էր հանգեցնել սպայական զորամարմնի կազմի երիտասարդացմանն ու թվաքանակի ավելացմանը:

(2) **31.9.** Համաձայն աղբյուրի, ո՞ր ժողովուրդն է համարվում անհուսալի Ռուսաստանի իշխանությունների համար և, ըստ Ձեզ, ինչո՞ւ:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [4-ին էջին](#)

(2) **31.10.** Համաձայն փաստաթղթի, Ռուսաստանի կայսրության n° տարածաշրջանում էր տարածված գերմաներենը և փաստաթղթում առկա n° տեղեկությունն է վկայում այդ փաստը:

(2) **31.11.** Համաձայն աղբյուրի, նշե՛ք միմյանցից անկախ, կոնկրետ պատճառները, որոնք կարող են խոչընդոտել հակառակորդի գործառնության տեղաշարժը Ռուսաստանի տարածքում իրականացվող ռազմական գործողությունների ընթացքում:

(2) **31.12.** Համաձայն փաստաթղթի, Գերմանիայի ռազմական ղեկավարությունը n° կոնկրետ պատճառներից ելնելով կարող է իրականացնել այնպիսի գորաշարժ, որը չէր համարձակվի կատարել մեկ այլ հակառակորդի դեպքում:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [4-ին էջին](#)